ՀՀ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

*STATE COMMITTEE OF THE ORGANIZATION AND CONDUCTION OF THE RA CENSUS 2001*

ОБЩЕГОСУДАРСТВЕННАЯ КОММИССИЯ
ПО ОРГАНИЗАЦИИ И ПРОВЕДЕНИЮ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ РА 2001г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

*NATIONAL STATISTICAL SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA*

НАЦИОНАЛЬНАЯ СТАТИСТИЧЕСКАЯ СЛУЖБА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2001թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
## *(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ)*

# *THE RESULTS OF CENSUS OF REPUBLIC OF ARMENIA OF 2001*
## *(FIGURES OF THE REPUBLIC OF ARMENIA)*

# РЕЗУЛЬТАТЫ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 2001г.
## *(ПОКАЗАТЕЛИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)*


Երևան 2003

*Yerevan 2003*

Ереван 2003

Սույնով երախտիքի ամենամեծ խոսքն է հղվում հանրապետության ողջ բնակչությանը, որն իր մասնակցությամբ և անգնահատելի վերաբերմունքով նպաստեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ մարդահամարի կայացմանը:

ՀՀ 2001թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովը երախտիքի խոսքեր է հղում նաև ՀՀ նախագահին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին, ՀՀ վարչապետին, ՀՀ նախարարություններին և գերատեսչություններին, ՀՀ մարզպետներին ՀՀ 2001թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման աշխատանքներին օժանդակելու համար և 930 համայնքների ղեկավարներին, որոնք փութաջանորեն նպաստեցին ոչ միայն հասցեային տնտեսությունները կարգի բերելու համար, այլև համայնքների տարածքներից հաշվարարների թեկնածուներ տրամադրելու հարցում:

Երախտիքի խոսքեր են հղվում նաև գիտակրթական և հասարակական կազմակերպությունների բոլոր այն անդամներին և աշխատակիցներին, որոնք իրենց առաջարկություններով և դիտողություններով, գիտական և կազմակերպական բնույթի բազմաթիվ սեմինարների ու աշխատանքային հանդիպումների ընթացքում տեղի ունեցած քննարկումների շնորհիվ էապես նպաստեցին մեթոդաբանական և կազմակերպական շատ հարցերի հստակեցմանն ու լուծմանը, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներին մարդահամարի նախապատրաստման, անցկացման և հետմարդահամարային գործընթացների հնարավորին լայն լուսաբանման համար:

Անկախության պայմաններում Հայաստանի 2001 թվականի առաջին ազգային մարդահամարը մեծապես հնարավոր դարձավ շնորհիվ

*This sends the biggest word of gratitude to the whole population of the republic, which with its participation and attitude provided to implementation of the first census of the Republic of Armenia.*

*The State Commettee of organizing RA 2001 census sends words of gratitude also to President of RA, Prime Minister of RA, RA ministries and commettees, Members of National Assabley of RA, Marzpets for organization and passing works of RA Census 2001 and to the Heads of 930 communities, which has provided not onlyto improve address housings, but also in the problem of providing the candidates to counters.*

*Thewords of gratitude are send also to all members and stuff of scientific-educational organizations, which with their proposals and notes during the many seminars and work meetings of scientific and organizational character took place because of discussions methodological and organizational many questions' conformation and solving, as well as mass media to illuminate the preparing of the Census, its passing and post-census activities.*

*In the condition of independence the firstNational Census of Armenia in 2001 wass mainly possible because of*

Слова величайшей благодарности посылается всему населению, которое своим участием неоценимым отношением содействовало тому, что первая перепись Республики Армения состоялась.

Общегосударственная комиссия по организации и проведению переписи населения РА 2001г. посылает слова благодарности также Президенту РА, депутутам Национального Собрания РА, Премьер министру РА, Министерствам и ведомствам РА, Марзпетам РА за содействие проведению и организации переписи населения и 930 руководителям общин, которые усердно содействовали не только привидению в порядок адресных хозяйств,но и в вопросе предоставления кандидатов в счетчики.

Слова благодарности направляются также всем тем членам и сотрудникам научно-образовательных и общественных организаций,которые своими предложениями и замечаниями , значительно способствовали решению многих организационных и методологических вопросов, а также средствам массовой информации за помощь деятельности подготовки, проведения переписи населения.

Проведенная, в условиях независимости Армении, первая национальная перепись населения 2001г. большей степенью стала возможным благодаря

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի

*UN Statistics Division*

Отдела Статистики ООН

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի

*UN Population Fund*

Фонда населения ООН

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի

*UN Development Programme*

Программы развития ООН

Համաշխարհային Բանկի

*World Bank*

*Всемирного банка*

Եվրամիության ՏԱՍԻՍ ծրագրի

*EU Tacis programme*

Программы Евросоюза Tacis

Եվրոստատի

*Eurostat*

Евростата

ԱՄՆ-ի կառավարության

*US Government*

Правительства США

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության

*US Agency of International Development*

Агенства международного развития США

ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի Հաշվառումների բյուրոյի

*US Department of Commerce Berau of Census*

Бюро Переписи Департамента Торговли США

Մեծ Բրիտանիայի կառավարության

*Great Britain Government*

Правительства Великобритании

Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության

*Department for International Development of Great Britain*

Министерства Международного развития Великобритани

Նիդերլանդների կառավարության

*Netherlands Government*

Правительство Нидерландов

Շվեյցարիայի դաշնային կառավարության

*Federal Government of Switzerland*

Федеральное Правительство Швейцарии

Հունաստանի կառավարության

*Government of Greece*

Правительства Греции

Ավստրիայի վիճակագրական ծառայության

*Statistical Service of Austria*

Статистической Службы Австрии

Հյուսիսային Իռլանդիայի NI-CO կազմակերպության

*Northern Ireland NI-CO organization*

Организации NI-CO Северной Ирландии

Հյուսիսային Իռլանդիայի վիճակագրական ծառայության

*Statistical Service of Northern Ireland*

Статистической Службы *Северной Ирландии*

Հյուսիսային Իռլանդիայի քարտեզագրման ինստիտուտի

*Northern Ireland Institute of Mapping*

*Института Картографии Северной Ирландии*

Դանիայի վիճակագրական ծառայության

*Statistical Service of Denmark*

Статистической Службы *Дании*

Շվեդիայի վիճակագրության բյուրոյի

*Bureau on Statistics of Sweden*

Бюро Статистики Швеции

ԱՊՀ Վիճակագրության կոմիտեի

*Statistical Committee of CIS*

Статистический Комитет СНГ

Ռուսաստանի Դաշնության վիճակագրության պետական կոմիտեի

*State Statistical Committee of Russian Federation*

Госкомстат Российской Федерации

Բուլղարիայի ազգային վիճակագրության ինստիտուտի

*National Institute on Statistics of Bulgaria*

Национальный Институт Статистики Болгарии

և հատկապես Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Լև Ֆրենկմանի կողմից գործադրված անգնահատելի ջանքերի:

*and we are very thankful to Lev Frankman for his personal input in the works of Census' organization*

и особенно благодаря неоценимым усилиям, приложенным со стороны представителя Всемирного Банка- Льва Френкмана

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները ներկայացվում են 12 հրապարակումներով՝ Հայաստանի Հանրապետության, ք. Երևանի, 10 մարզերի համար:

Յուրաքանչյուր հրապարակում ներառում է համապատասխան տեղեկություններ բնակչության թվաքանակի ու տարածքային բաշխվածության, ժողովրդագրական բնութագրերի, կրթական մակարդակի, սոցիալ-տնտեսական բնութագրերի, ազգային կազմի, միգրացիայի, տնային տնտեսությունների քանակի ու կազմի, բնակչության բնակության պայմանների վերաբերյալ:

Հրապարակման մեջ զետեղված են ինչպես խորհրդային տարիներին Հայկական ՍՍՀ-ում անցկացված մարդահամարների մասին պատմական համառոտ ակնարկ, այնպես էլ անկախության պայմաններում իրողություն դարձած ՀՀ 2001թ ազգային մարդահամարի անցկացման պատմությունը: Այն ներառում է մարդահամարի հարցաթերթը, ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված և Պետական գրանցման ենթարկված մարդահամարային փաստաթղթերի ցանկը, մարդահամարի կազմակերպման փուլերի մանրամասն նկարագրերը, մարդահամարի ելքային աղյուսակները:

Հրապարակումը նախատեսված է հանրության լայն շրջանի համար: Այն կարող է ուղեցույց հանդիսանալ հետագա մարդահամարների անցկացման համար:

## *FOREWORD*

*The results of the Census of 2001 are published in 12 books-The Republic of Armenia , Yerevan and 10 marzs.*

*Each book contains corresponding information about the size of population and it's spatial distribution, the demografic characteristics, educational attainment, social-economical descriptions,ethnic structure, migration, household's number and structure, and conditions of the population.*

*The publication includes a brief historical review of the censuses during the years of the Soviet Union, as well as about the history of the national census in the conditions of independence, in 2001. It includes the questionnaire of the census, the list of census documents signed by the State statistical council of RA, the detail descriptions of the phases of census, the output tables of the census.*

*The publication is for all the readers. It can also serve as an indication for the organization of the future census.*

## ПРЕДИСЛОВИЕ

Результаты переписи населения РА 2001г. издаются двенадцатью книгами: Республика Армения, г. Ереван, 10 марзов.

Каждая книга содержит в себе соответствующие сведения о количестве населения и территориальном распрвделении, о демографической характеристике уровне образования, социально-экономической характеристике, национальном составе, миграции, количестве и составе домашних хозяйств, жилищных условиях населения.

В публикации помещен краткий исторический очерк как о проведенных переписях населения в советские годы в Арм ССР, так и переписи населения , проведенной в условиях независимости РА. Она содержит в себе опросный лист, утвержденный Государственным статистическим советом РА, подробное описание этапов организации переписи населения, выходные таблицы переписи населения.

Публикация предусмотренна для широкого круга читателей. Она может стать путеводителем для дальнейшего проведения переписи населения РА.

# ՄԱՍ I

## *PART I*

## ЧАСТЬ I

## Հ. Աբրահամյան
## *H. Abrahamyan*
## О.Абраамян

*ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար*
*ՀՀ 2001թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ*

*Minister for Regional Administration and for Coordinating Infrastructure Activities of RA*
*The Head of the State committee of the organization and conduction of the RA Census 2001*

Министр по территориальному управлению и координации деятельности инфраструктур РА
Председатель общегосударственной комиссии по организации и проведению переписи населения РА 2001г.


## Ուղերձ

Յանկացած երկրի համար մարդահամարի անցկացումն ունի կարևորագույն քաղաքական և տնտեսական նշանակություն:

Մարդահամարների արդյունքների հիման վրա բնակչության վերաբերյալ ստացված բազմաբնույթ տեղեկությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու տվյալ երկրի հասարակական և տնտեսական զարգացման մակարդակը և կանխորոշելու հետագա առաջընթացի նոր ուղղություններն ու սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունում տարբեր ժամանակահատվածներում անցկացված մարդահամարները՝ ծրագրային, բովանդակային, նպատակային, ինչպես նաև նախորդող պայմանների և ստացված արդյունքների կիրառելիության տեսանկյունից ունեցել են իրենց բնորոշ առանձնահատկությունները: Այս առումով իր տնտեսական և քաղաքական կարևորությամբ, ծրագրային համընդհանրությամբ առանձնանում է 2001 թվականի հոկտեմբերի 10-19-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարը:

Ամենից առաջ այդ մարդահամարը Հայաստանի անկախության պայմաններում անցկացված առաջին մարդահամարն է և այն մեկ անգամ ևս վկայեց անկախ հանրապետության շուկայական տնտեսահարաբերությունների անցման, բաց հասարակության ձևավորման, կառավարման, տնտեսական ու սոցիալական կառավարման, տնտեսական ու

## *Message*

*Census conduction has important political and economic meaning for any country.*

*Comprehensive information about population obtained from the Census results gives an opportunity to study the level of the social and economic development of the given country and to project the new principles and directions of the future progress.*

*Censuses conducted in the Republic of Armenia within different periods, had had their specific characteristics from the point of the program, content and purpose, as well as of previous conditions and utilization of the obtained results . From this point by its economic and political importance,universality of the program, the Census conducted in 2001, from 10 to19 October , is quite different.*

*First of all that Census is the first one, organized in the Republic of Armenia in the independent conditions , and it again witnessed the activation of human factor in the reforms put in management,social and economic spheres, wile passing to market economy and formation of open society, as well as the definite increase of the census role, as a primary source of basic benchmark statistics on population. The results of the last census conducted in Armenia in 1989, after the*

## Послание

В жизни любой страны перепись населения имеет важнейшее политическое и экономическое значение. Разнохарактерные данные о населении, полученные на основании результатов переписи населения дают возможность изучить общественный и экономический уровень развития и предопределить новые пути и принципы дальнейшего прогресса.

В Республике Армения были проведены переписи населения: програмные, содержательные, целевые, которые с точки зрения применимости предшествующих условий и полученных результатов, имели свои характерные особенности.

В этом смысле своей экономической и политической важностью, программной всеобщностью выделяется перепись населения РА проведенная с 10 –19 октября 2001г..

Прежде всего, это первая перепись, которая проведена в условиях независимости Республики и которая еще раз свидетельствует о переходе независимой Республики к рыночным экономическим отношениям, о формировании открытого общества, управлении, об активизации человеческого фактора, которая осуществляется в реформах экономической и социальной сфер; переписи, как источника комплексных данных о населении, о значении

սոցիալական ոլորտներում իրականացվող ռեֆորմներում մարդկային գործոնի ակտիվացման, մարդահամարի, որպես բնակչության մասին համալիր տեղեկությունների հիմնական աղբյուրի, նշանակության էական աճի մասին:

1988 թվականի դեկտեմբերյան երկրաշարժից հետո, ղարաբաղյան հակամարտության հետևանքով երկրում ստեղծված տնտեսական ու քաղաքական անկայունության պայմաններում 1989 թվականին Հայաստանում անցկացված վերջին մարդահամարի արդյունքները օբյեկտիվ պատճառներով շատ շուտ կորցրեցին իրենց արդիականությունը և, բնականաբար, չէին կարող հիմք հանդիսանալ բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառման համար:

Ի տարբերություն նախորդի, Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականի մարդահամարը կազմակերպվեց և անցկացվեց օրենսդրական լուրջ հիմքերի առկայության պայմաններում: Մարդահամարի անցկացման անհրաժեշտությունից ելնելով՝ 1999 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքը, որով սահմանված ժամկետներն ու դրույթները պահանջեցին 2001 թվականի մարդահամարին մոտենալ նախապատրաստման և անցկացման պետական համալիր ծրագրով, վերջապես, ի տարբերություն ընթացիկ հաշվառումների, մարդահամարը ծրագրավորվեց, որպես գիտականորեն կազմակերպված ժողովրդագրական կարևոր հետազոտություն: 2001 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարը առանձնանում է իր լուրջ ծրագրամեթոդաբանական ապահովվածությամբ:

Մարդահամարի նպատակն էր նախօրոք հաստատված ծրագրի համաձայն ողջ երկրի տարածքում մանրամասն տեղեկություններ ստանալ բնակչության թվաքանակի,

*1988 December earthquake , in the social-economical unstable conditions caused by the Kharabakh conflict, lost their reliability by objective reasons and naturally couldn't serve as a basis for current population estimations.*

*As distinguished from the previous one, Census 2001was organized and conducted with serious legislative basis. Taking into the consideration the importance of the organization of the Census, in 1999 the Parliament of the Republic of Armenia adopted the law "On Census", the isuues and terms fixed in it required to treat the Census by the state complex program of organization and conduction. At last, being different from the current registration, the Census was planned as scientifically organized demographic important survey. The 2001Census in the Republic of Armenia is distinguished by its serious methodological maintenance.*

*The aim of the Census was to obtain detailed information about the population size, composition, distribution , migration, reproduction, labor market and the housing conditions of the population, according to the plan confirmed before. And from the point of implementing this aim, the 2001 Census in our country was considered to be the most important, difficult and responsible undertaking. In order to conduct the with high-level and organized Census great organizational and methodological efforts were required which were directly implemented by the National Statistical Service of the Republic of Armenia with the assistance of national and local self-government bodies and different state and international organizations.*

*The preparatory works implemented by the State Commission of 2001 Census and comissions for Census preparation and conductions of city Yerevan and RA Marzes created by RA government decisions, as well as the scientific-methodological provision of the program design became the main proof of the RA 2001 census conduction in high level .*

существенного роста.

После декабрьского землетрясения 1988г. в условиях экономической и политической нестабильности, создавшейся вследствии Карабахского противостояния 1989г., результаты последней переписи населения РА 1989г. по объективным причинам очень скоро потеряли свою актуальность и, естественно не могли явиться основой для текущего учета численности населения.

Перепись населения РА 2001г., в отличии от предыдущей, была организована и проведена в условиях наличия законодательной основы.

Исходя из необходимости проведения переписи населения Национальное Собрание РА в 1999г. приняло закон РА "О переписи населения", по которому установленные сроки и положения требовали: подойти с государственной комплексной программой подготовки и проведения переписи населения РА 2001г., которая в отличии от текущих учетов, была запрограммирована, как народное, организованное, научно обоснованное исследование.

Перепись населения РА 2001г. выделяется своей серьезной программно–методологической обеспеченностью.

Цель переписи, согласно заранее утвержденной программе, получить на теретории всей страны подробную информацию о численности населения, структуре, распределении, миграции, воспроизведении, рынке труда и об условиях жизни населения. Именно с точки зрения осуществления этой цели, перепись населения 2001г., в жизни нашей страны рассматривается как важнейшее, сложное и ответственное событие. Для организованного проведения переписи на вышем уровне потребовалась огромная организационная, программно–методологическая работа, которая была осуществлена Национальной статистической службой РА, орга-

կառուցվածքի, տեղաբաշխման, միգրացիայի, վերարտադրության, աշխատանքի շուկայի և բնակչության պայմանների վերաբերյալ: Հենց այս նպատակի իրագործման տեսանկյունից էլ 2001 թվականի մարդահամարը մեր երկրի կյանքում դիտարկվեց որպես կարևորագույն, բարդ ու պատասխանատու իրադարձություն: Մարդահամարը բարձր մակարդակով և կազմակերպված անցկացնելու համար պահանջվեց կազմակերպչական և ծրագրամեթոդաբանական հսկայածավալ աշխատանք, որի անմիջական իրականացնողը պետության Ազգային վիճակագրական ծառայությունը՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և միջազգային տարբեր կազմակերպությունների աջակցությամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով ստեղծված մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական և մարդահամարի նախապատրաստման և անցկացման Երևանի քաղաքային և մարզային հանձնաժողովների կողմից իրականացված նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև ծրագրի մշակման գիտամեթոդական ապահովվածությունը եղան 2001 թվականի մարդահամարի բարձր մակարդակով անցկացման հիմնական գրավականը:

Ինչ խոսք, մարդահամարի ծրագիրը ուղղակիորեն անհնարին կլիներ իրագործել առանց նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովվածության: Այս հարցում ուղղակիորեն ներդաշնակվեցին մարդահամար անցկացնելու Հայաստանի կառավարության վճռականությունն ու այդ կարևորագույն գործին դոնոր երկրների կողմից ֆինանսական աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը:

*No doubt that the program of the Census would simply fail without the appropriate financial means for Census preparation, conduction and data processing .*

*Commision of the organization and realization of the Census, I give my word of thanks*

*In this problem the resolution of the government to conduct census and the donor countries readiness for financial assistance were directly harmonized.*

*As the Head of the State commission of 2001 Census organization and conduction, I express my thankfulness form the name of the Government of Armenia to all those international organizations and donor countries, by whose assistance the realization of Census became possible.*

*A large number of human resources were involved in the works of 2001Census preparation and conduction. I may say, that all the citizens of the Republic of Armenia gave their participation to census conduction. It's worth to asure, that on the experience of the organization of this Census the importance of the future censuses will be seen more clearly, as by the results of each census, the present and future of the country is estimated.*

нами государственного управления и местного самоуправления, при содействии различных международных организаций.

Основным залогом проведения переписи населения 2001г. на высшем уровне стало обеспечение научно–методологической обработки программы, как и осуществление созданными правительственными решениями РА, комиссиями марзов и ереванской городской комиссией подготовительных работ подготовки и проведения общегосударственной переписи населения РА.

Конечно, осуществление программы переписи населения было бы не возможно без обеспечения расходов на подготовку, проведение и обработку материалов соответствующими финансовыми средствами.

В этом вопросе непосредственно сочитались решительность правительства Армении в проведении переписи населения и готовность стран – доноров оказать финансовое содействие этому важнейшему делу.

Как председатель общегосударственной комисии по организации проведения переписи населения РА 2001г. от имени правительства Армении выражаю благодарность всем тем международным финансовым организациям и странам–донорам, благодоря содействию которых , стало вазможно претворение в действительность организации и проведения переписи населения. В дело проведения переписи населения 2001г. были вовлечены многочисленные человеческие ресурсы. В проведении переписи населения, можно сказать, соучастниками стали все граждане РА. Уверен, что на основании опыта организации и проведения переписи РА 2001г. будет утверждена и совершеннее воспринята следущая перепись населения, имеющая экономическую и политическую важность и необходимость, т.к. результаты переписи населения оценивают настоящее страны , и по – новому подчеркивают будущее.

Որպես Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի կառավարության անունից շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն միջազգային ֆինանսական կազմակերպություններին և դոնոր երկրներին, որոնց աջակցության շնորհիվ հնարավոր եղավ իրականություն դարձնել մարդահամարի կազմակերպումն ու անցկացումը:

Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքներում ներգրավվեցին մեծաքանակ մարդկային ռեսուրսներ: Մարդահամարի անցկացմանը, կարելի է ասել, հաղորդակից դարձան Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները: Համոզված եմ, որ 2001 թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման փորձի հիման վրա կհաստատվի և առավել կատարյալ կընկալվի Հայաստանի անկախ հանրապետության հետագա մարդահամարների տնտեսական ու քաղաքական կարևորությունն ու անհրաժեշտությունը, քանզի յուրաքանչյուր մարդահամարի արդյունքներով գնահատվում է երկրի ներկան և նորովի ուղենշվում ապագան:



**Ս. Մնացականյան**
***S. Mnatsakanyan***
**С. Мнацаканян**

*ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ*
*The President of the National Statistical Service of the RA*
Председатель Национальной статистической службы РА

## Ուղերձ

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2001թ. հոկտեմբերի 10-19-ըՀայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարն առաջինն էր մեր երկրի պատմության մեջ, որն իրականություն դարձավ անկախության պայմաններում:

Ցանկացած երկրի համար խաղաղ պայմաններում մարդահամարները հանդիսանում են ամենախոշոր միջոցառումները, որոնք առնչվում են մարդահամարի պահին երկրի ողջ բնակչությանը: Այս առումով ՀՀ 2001թ. մարդահամարը բացառություն չկազմեց:

Մարդահամարների նպատակը ոչ միայն ըստ երկրի վարչատարածքային բաժանման բնակչության թվաքանակի և կազմի պարզումն է, այլև մարդահամարային ամփոփ ցուցանիշների օգնությամբ հասարակությանն ու քաղաքական վճիռներ կայացնող ատյաններին ավելի որակյալ որոշումներ կայացնելուն օժանդակելը, երկրի ապագայի ու զարգացումների ուրվագծերը հստակեցնելն է:

ՀՀ 2001թ. մարդահամարին, հաճելիորեն, չարձանագրվեց որևիցէ արտառոց միջադեպ, ինչը հիմնականում պայմանավորված էր, մեր երկրի բնակչության կողմից ցուցաբերված այն անգնահատելի բարյացկամ ու հանդուրժողական վերաբերմունքով, որի ականատեսներն էին մարդահամարի նախապատրաստման, կազմակերպման և անցկացման գործընթացներին մասնակցած մոտ 16 հազար աշխատակիցները, այդ թվում 8 միջազգային

## *Message*

*The first census in the history of the Republic of Armenia,which became true only in the conditions of independence, was conducted in 2001, 10–19 of October, according to the RA law “On census ” .*

*In peacetime censuses are regarded to be the biggest undertakings involving the whole population, for any country. And in this sense the RA 2001 census was not an exception.*

*The aim of the census is not only to estimate the size, distribution and composition of the population, but also to promote the society and political decision - makers to take qualified decisions ,to clearify the outlines of the country’s future and its development , useing the census summary data .*

*It’s pleasant to mention, that during the RA 2001 census not a single strange case was registered, which was mostly due to the invaluable benevolence and tolerence of our country’s population, the witnesses were nearly16 000 staff recruited for preparatory, organization and conduction processes , as well as the representatives of 8 International organizations and 11countries, who contributed the RA to hold the first census in the period of independence. Besides t he words of gratitude to the population of our country ,it’s worth rendering due to the international society, in the face of all those donor international organizations and governments who offered invaluable material, financial experimental and consulting assistance for the realization of the RA 2001 census.*

## Послание

Согласно закону РА “О переписи населения” с 10-19 октября 2001г. в Республике Армения впервые в истории нашего народа была проведена перепись населения, которая претворена в действительность в условиях независимости Республики.

Переписи населения в мирных услоиях для любой страны являются самыми крупными мероприятиями, соприкасающимися со всем населением страны.

В этом смысле не была исключением и перепись населения РА 2001г.

Цель проведения переписи населения не только выяснить численность и состав административно-территориального деления страны, но и помочь инстанциям, осуществлющим общественные и политические постановления, принимать более качественные решения об определении контуров будущего развития страны с помощью обобщенных показателей переписи населения.

Приятно, что во время переписи населения РА 2001г. не были зафиксированны какие-либо нелепые инциденты, что, в основном, были обусловлено тем неоценимым доброжелательным и терпеливым отношением населения нашей страны, свидетелями которого были участвующие более 16000 работников, в том числе международных организаций и представителей 11 стран, которые содействовали делу подготовки, организации и проведения первой переписи населения РА в условиях независимости Республики.

կազմակերպությունների և 11 երկրների ներկայացուցիչները, որոնք օժանդակում էին Հայաստանի Հանրապետությանը անկախության պայմաններում իր առաջին մարդահամարն անցկացնելու գործում: Մեր երկրի բնակչությանը հղված երախտիքի խոսքից զատ, հարկ է արժանին մատուցել նաև միջազգային հանրությանը, ի դեմս բոլոր այն միջազգային դոնոր կազմակերպությունների և երկրների կառավարությունների, որոնք անգնահատելի նյութական, ֆինանսական, փորձագիտական և խորհրդատվական օժանդակություն ցուցաբերեցին Հայաստանին ՀՀ 2001թ. մարդահամարն իրականություն դարձնելու գործում:

ՀՀ 2001թ. մարդահամարի կարևորությունն ու նշանակությունն արժևորվում է նաև այն հանգամանքով, որ ԽՍՀՄ վերջին՝ 1989թ. մարդահամարն անցկացվել էր Սպիտակի աղետալի երկրաշարժից անմիջապես հետո, ինչն անմիջականորեն ազդել էր այդ մարդահամարի ցուցանիշների գործունակության վրա: Ավելին, հետագա տարիներին, ԽՍՀՄ փլուզման, Ղարաբաղյան հակամարտությամբ, ազգամիջյան պատերազմի և նոր տնտեսակարգի ձևավորմամբ պայմանավորված, ժողովրդագրական տեղաշարժերի տեղեկատվական ոլորտում ձևավորվել էր «անորոշության դաշտ», քանզի բնակչության կազմի և թվաքանակի վերաբերյալ Հայաստանի ժողովրդագրական բոլոր ցուցանիշները «դատապարտված էին» հիմնվելու 22-ամյա վաղեմության մարդահամարի (1979թ.) տվյալների վրա:

Վերոհիշյալով հանդերձ, հուսով ենք, որ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներն էապես կնվազեցնեն վերոհիշյալ «անորոշության դաշտը» և հիմք կհանդիսանան ժողովրդագրական ցուցանիշների ընթացիկ հաշվառման համակարգերը կատարելագործելու աշխատանքներում:

*The importance and meaning of the RA 2001 census is also valued due to the fact, that the last population census of USSR, in 1989,was conducted right after the disastrous Spitak (northern Armenia)earthquake which influenced on the functioning of census results. Even more, during the following years, as a result of the collapse of theUSSR, conflict arround Karabagh , the formation of the new economic system, an "indefinite field"was created around demographic data, as the population estimations were to be based on 22 year old (1979)census data .*

*Taking into consideration the above mentioned, we hope, that the results of the RA 2001census will substantially minimize the above mentioned "indefinite field", and will serve as a base for improving counting system of the demographic current estimations.*

Помимо слов благодарности, выраженных населению нашей страны, необходимо отдать должное также международной общесвенности в лице всех международных донорских организаций и правительств стран, которые оказали неоценимую материальную, финансовую экспертную и консультационную помощь действительность переписи населения РА 2001г.

Важность и значение переписи населения РА 2001г. оценивается так же тем обстоятельством, что последняя перепись в СССР была проведена в 1989г. непосредственно сразу после стихийного землетрясения в Спитаке, что повлияло на действенность показателей переписи населения.

Более того, в последующие годы распада СССР, карабахского противостояния, межнациональных и экономических формирований, обусловленных демографической миграцией, в сфере информации формировалось как "поле неопределенности", ибо демографические все показатели о составе и численности Армении были "приговорены" основываться на данные переписи населения 1989г, имеющие двадцатидвухлетнюю давность.

Вместе с вышесказанным, надеемся, что результаты переписи населения РА 2001г. существенно уменьшат вышеупомянутое "поле неопределенности" послужат основой усовершенствования работ по систематизации текущего учета демографических показателей.

**Վ. Խաչատրյան**
***V. Khachatryan***
**В. Хачатрян**

*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար*
*The Minister of Finance and Economics*
*Министр финансов и экономики Республики Армения*

## Ուղերձ

Ես շատ եմ կարևորում մարդահամարի անցկացումը Հայաստանում և գտնում եմ, որ Անդրանիկ Մարգարյանի ղեկավարած կառավարության կատարած կարևորագույն գործերից է նաև մարդահամարի անցկացումը:

Կարևոր է, որ այս կառավարությունը չխուսափեց այդ հարցից և դրսևորեց քաղաքական կամք հենց իր կառավարման ընթացքում անցկացնել մարդահամար, անկախ նրանից, թե այդ միջոցառման արդյունքները ինչպիսի խնդիրներ կառաջացնեին: Ես ցանկանում եմ նաև իմ խորին շնորհակալությունը հայտնել նախ դոնոր հանրությանը իրենց գործուն աջակցության համար, այն աջակցության, որ դրսևորեցին թե մարդահամարի անցկացման որոշում ընդունելու, և թե բուն պրոցեսի ընթացքում:

Ցանկացած տեղեկատվության, հատկապես մարդահամարի, արժանահավատությունը խիստ կարևորվում է ինչպես երկրի ազգաբնակչության, այնպես էլ միջազգային հանրության համար: Արժանահավատ տեղեկատվության առկայությունը հնարավորություն է տալիս (հատկապես ժողովրդագրական ցուցանիշների մասով) սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման հիմքում դնել ոչ թե փորձագիտական գնահատականներ, այլ իրական ցուցանիշներ, որը նախընտրելի է հենց այդ ծրագրերի իրականացման արդյունավետության տեսանկյունից:

Հայաստանում վերջին մարդահամարն անց էր կացվել դեռևս խորհրդային տարիներին և բնական է, որ այն չէր արտացոլում երկրի իրական պատկերը: Բացի այն, որ արդեն տնտեսական և հասարակական համակարգը փոխված էր,

## *Message*

*I give a great importance to the Census conduction for Armenia, and I think that one of the most important actions taken by the government headed by Andranik Margaryan is considered to be the organization of this Census, as well.*

*It's necessary, that this government didn't avoid this problem and displayed political will to organize the Census just during their Government no matter what problems would be brought by the results of that process. I wish to give my deep gratefulness to the donor countries for their effective help, and interference in both making decisions and in the process itself.*

*The reliability of any information, especially census data, is very important for country's population and international society. The existence of valuable information gives an opportunity instead of expert estimations to use real figures as a basis for the socio-economic development programs, which is preferable from the viewpoint of successful realization of those programs.*

*In Armenia the last Census was organized in the years of the Soviet Union, and it's natural that it didn't show the real picture of the country. Besides the fact that the economic and social structure had been changed, since 1991 the information about size of emigrants become hard to capture by the statistical bodies. In this situation, the necessity of census conduction was more than evident for the Republic of Armenia as it had chosen the direction aim of improving the social and economical conditions .*

*The results of the Census are especially important for the realization of economic, as well as social and territorial policies, creating true,reliable*

## Послание

